

**Տ. ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ՍԱՐԳԱՅԱՆԻ  
ԱՆԴՐԱՇԽԿ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ  
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ  
(13 հունիսի 2004 թ.)**

«Էջմիածինը միշտ կրաշխի ու չի նվազիր, ինչքան  
բաշխով՝ այնքան կշարուա, ինչքան լուս սփռե՞այնքան կշողա:  
Դարեւ կուգան, դարեւ կանցնեն, Ան կրարձրանա, կուսավորե,  
միշտ կներշնչե, կյանք դալով կապրի»:  
Վազգեն Ա

Խոսքեր, որոնք արդարերվել են հոգելույս Նայրապետ Վազգեն Ա-ի կողմից, ով Ասրծոն փնտրպութի ճանապարհին գփավ Ս. Էջմիածինը ոչ միայն որպես նյութական հասպարություն, այլև կենացանարար ջուր, կենաց հաց, աղբյուր անմահության և բաշխող պարզացաց:

Վեհապարբար պապիշաճ խոսքեր, որոնց հենմամբ էլ ավելի է ցնծում և բերկրում մեր հոգին անդրանիկ պապարազումով և օրվա խորիշով ամբողջացմամբ ու լրնամբ:

Փառք Ամենակարող Քարձյալ Տիրոջը այս պահին և ապրումին արժանացնելու համար, քանզի դիկար էինք և Ասպուծով զորացանք, հիմար էինք և իմաստնացանք, աղքար էինք և հարսկացանք և ահա պապիկն ունենք մեր դիկար ծնորերում ունենալու Տիրոջ Սուրբ Նշանն ու Սուրբ Ավելարանը՝ աղքարներին քարոզելու Ասրծո Ավելարանը և հիվանդներին բժշկելու:

Այդու մեր որդիհական խոնարիությունը, հավաքարմությունն ու սերն ենք հայրնում ազգիս Վեհափառ Նայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Սրբազնագույն Կաթողիկոսին և Ծայրագոյն Պարրիարքին Ամենայն Նայոց, ով իր մականի ներքո այս սուրբ և խնկարույր կամարներից սկսյալ մեզ ջամքեց Ս. Էջմիածնի հոգևոր կաթը: Խոկ մենք՝ իր ծեռնատունները, միշտ մեր հոգիներում և մոքերում իրեն ծշմարիլ հոգևորականի դիպար ունենք Նորին Սրբությանը: Չեմ կարող չիիշել և երախսագիրության խոսքը չիխսանցել ծնողներիս: Նրանք են առաջին պապճառը նյութելեն մարմնում հոգևոր լոյսի առկայժման՝ իրեն մի կանթեղ, որը պիփի նորոզվեր, պիփի շողարձակեր իր ցոլքերը զիգական հավաքրի և իմացականի անուշարույր յուղի սնուցմամբ, ինչի համար երախսապարտ եմ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանցի գրեչությանը և դասախոսական կազմին: Նաև իմ որդիհական ակնածանքն ու սերը ինձ ծեռնադրող Սրբազն Նորը՝ իմ հոգևոր ծնողին, Սյունյաց թեմի քարեխնամ առաջնորդ Տ. Արքահամ եպս. Մկրտչյանին, ում ծեռամբ իմ և օծակից եղբայրներիս վրա Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհները ենդվեցին:

Օգտագործելով պապեան առիթը՝ շնորհակալություն եմ հայրնում Արքարարյան Նայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին և ներկա

գրեվող բահանայից դասին՝ իրենց բարի վերաբերմունքի և արրահամյան հյորընկալության համար, այս լուս խորանում պատրազելու և սրբի բարեխոսությունը հայցելու մեջ բոլորին համար:

Այսօր մենք ազգովի իրեն հավաքականություն վերսպիս կանգնած ենք անպատճենի և աննկարագրելի մի խորհրդի առջև: Խորհուրդ, որ մեր դարավոր գոյության առհավաքչյան է, ինչն ինքնին մեր բոլոր նկեղեցիների մայր Ս. Էջմիածնի գունն է: Դարերի հորվույթում այն իրեն անմար փարոս, ուղենիշ է եղել հայի համար թե՛ հոգևոր, թե՛ ֆիզիկական գոյության և ոչ միայն գոյության, այլև բարգավաճման համար: Այս հանգամանքով են պայմանավորված պարմիչների, գրողների և ժողովրդական բանասացների գործեր ժամանակներում արդահայրած հիացական խոսքերը, որոնցով Էջմիածնին համեմապկում և համարձեք է նկարվում հինկարակարանյան մի շարք սրբությունների և հասկացությունների: Վարդապետ բոլորս քաջարեղյակ ենք Ազգաբանվեղոսի Պարմության այն դրվագին, որ դեռ պարմվում է, թե ինչպես մեր հավադրի հայր ասպածախոս Գրիգոր Լուսավորիչն իր հավաքրով ու ջերմեռանդ աղոթքներով Միածնին իջևոց Արարադյան աշխարհ՝ ի թշկություն իր ազգի հոգևոր վնքերի ու ախսերի: Եվ մինչդեռ ուրիշ ազգեր ու նկեղեցիներ նորանոր փաստեր ու հավաքումներ են փորձում վերհանել ի հավասպումն իրենց նկեղեցիների առաքելահիմն լինելու, ապա Հայր Վարդապ շնորհ արեց մեզ երկրորդ անգամ ուղարկելով իր Որդուն աշխարհ՝ դաշն Արարադյան՝ ի սրբության Մասսյաց: Եվ Միածնը ուսկե ուռը ծնոքին հարվածեց այն փեղին, որպես ջրեղեղով աշխարհի նորոգության ժամանակ Նոյ նահապետն իր առաջին զոհը մարդուց Ամենակալ Վարդուն: Այն մեզ համար այդ պահից սկսած դարձավ արզանդ սրբության, նոր կյանքի սկիզբ՝ հասարակական և մշակութային նոր դրստրումներով: Եվ իրավես, երբ հաղորդվում ենք այդ ձեռակերպ, բայց և հոգեզմայ ու հոգեպարար, ավելարանական խոսքով ասված՝ անկյունաքարին, կենդանի աղբյուրներ են բխում մեր հոգում, ապրում ենք «ոչ միայն հացի, այլ ամենայն բանի, որ եւանէ ի բերանոյ Տեատր» (հմմբ. Մագր. Դ 4):

«Էջմիածնը միշտ կրաշխվի ու չի նվազիր՝» միայն ազգասիրությունից և նկեղեցապաշտությունից բխած բառեր չեն սրանք, ոչ երբեք: Եթե թերթում ենք մեր ոսկեզրիչ պարմիչների գործերը, մեր հայացքի առջև Այն կանգնած է ինչպես անխորդակելի մի նավ, որը պարմության ալեկոծ օվկիանում անվրդով իր ընթացքն է կարարել դեպի խաղաղ նավահանգիստ: Մայր Տաճարի զանգերի դողանչներն են, որ միշտ «ի գուտ և ի գիշերի» մեզ արթուն են պահում:

Ինչքան բաշխվի՝ այնքան կշարանա. ինչպես որ Հին Ուխտում Վարդապ երկնից մասնանա իջևոց, այնպես էլ Տիրոջ գալսդյամբ և մանավանդ էջրովը Արարադյան աշխարհ, Հայկազնյաց երկիր, մեզ համար դպից մի նոր կերակոր, որի ճաշակմամբ կյանք պիտի ունենանք և ավելիով ունենանք: Ամեն անզամ, երբ մուրզ եմ գործում նրա աղոթաշաղախ կամարներից ներս, հոգումս ու միքունմ կոչնակի նման դրդանշում են ասված հեքիչայ խոսքերը. «Շարերն են միքնում Վարդապահիմն այդ դաշտաքը, սակայն ոչ բոլորն են միահանուվում ու միահյուսվում նրա խորհրդին, դանում իրենց հետ այդ սուրբ խորհուրդը՝ նորոգելու ու պայծառացնելու հայրենական օջախի լույսը, այն մշտաբորբոք պահենու»:

Ահա այդ լույսի մասին էր Վազգեն Վեհափառ ասում. «Խնճքան լույս սփոռե, այնքան կշղնա»:

Եվ ի վերջո՝ «Դարեր կուգան, դարեր կանցնեն, Ան կբարձրանա, կլուսավորեն, միշտ կներշնչե, կյանք դալով կապրի»: Իրապես, դարեր են եկել ու անցել՝ իրենց հետ բնրելով բազում որոգայթներ ու վկանգներ, սակայն Էջմիածինը միշտ կմնա կանգուն ու անխափ, «քանզի ի վերայ վիմի հաւաքոյ է հասքափեալ», որպես ճշմարիփ ականափեսն ու վկան մեր անցած ուղու դիմուր և ուրախալի պահերի: Տովհաննես Տովիաննիսյանի բնորոշմամբ՝

Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,  
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Քանի՞ անգամ է նա դիմուր իր մանուկների կուտորածը, ողբացել ու սգացել, բայց ոչ երեք հուսահավաքել հար ու նման Ռաքելին, քանզի զգում էր իր մանուկների փրկությունը, զիկներ, որ մի պայծառ առավոր, նմանողությամբ այս առավորին, իր զանգերի ավելացներ դողանջների ներքո, իր զավակներով շրջապարփած ոգեզմայլ շարականների երգեցողությամբ իր զիրկն է ընդունելու զեխյուսի մեղմ հովից շարժվող վեղարավոր հայրեր, որոնք ազգընդիր և Սրբալոյս Մյուտոնով օծված Տայրապետի զիխավորությամբ օրինություն պիտի բաշխեն նոր կյանքով լեցուն իր զավակներին, և ինքը՝ Էջմիածինը, խինդով լեցուն պիտի նայի մեր հավերժությունը խորհրդանշող Մասիսին՝ հրավիրելով նրան մասնակիցը լինելու այդ հանդեսին: Ձերևս այս միաձումներով դրոգորված հոգելորյուս Տայրապետը ասաց. «Էջմիածինը միշտ կրաշխվի ու չի նվազիր, ինչքան բաշխվի՝ այնքան կշարնա, ինչքան լոյս սփոռե՝ այնքան կշողա: Դարեր կուգան, դարեր կանցնեն, Ան կրարձրանա, կուսավորեն, միշտ կներշնչե, կյանք դալով կապրի»:

Ընդունենք մեզ վսփահված այս ազնիվ քանքարը, որպեսզի Տիրոց երկրորդ գալստյան ժամանակ ազգովի լսենք արքայական բառերը. «Ազնիվ և բարի ծառու քանի որ տիրորի մեջ հավարարին գլուխեցիր, մեծ բաների վրա կլարզեն քեզ, մորիր իմ ուրախության մեջ»:

Ահա այս խորհրդածություններով լեցուն բացենք մեր հոգու դրները, որպեսզի Միածինը մեկ անգամ ևս ոսկի ուրը ձեռքին, լուսազգյաց կերպարանքով իջնի մեր հոգուց ներս, սուզվի այնքեղ, դար շունչ բարածի մեր մարմնի մեջ, մի դիմակ սուրբ սարսուռ, որ ասում է. «Կողիկներոյ հանի՛ր, որովհելու այն դրեղը, ուր կանգնած ես, սուրբ է»:

Ծնորիք, սեր և ասդվածային սրբարար զորություն եղիցի ընդ ձեզ և ընդ ամեննսյանդ ամենն: